

ՅՈՒՆԱՆԴԵՍ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Միջին դարուց Ալբրիականի պատմական գեղափայլ Դշխոյն՝ իւր բովանդակ հրապուրիչ և հիացուցիչ պայծառութեան մէջ կը գրանուէր ապրիլ ամսոյ երեք՝ վերջին օրերուն մէջ։ Վէնափառ իշխանսպանց՝ իտալիոյ թագաժառանգին և իւր լծակցին Հենրիկայ, ինչպէս նաև բազմաթիւ համբաւուր քաղաքական, զինուորական ու գիտնական անձանց և գերահաշակ նկարչաց ներկայութեան հետ, 45—50,000 օտարականք ևս՝ աշխարհիս աւելն կողմերէն հոս դիմելով, երրորդ մասամբ աւելցուցեր էին քաղաքիս բնակչաց թիւը, որ անզգար շարժման կամ մանաւանդ եռասպման մէջ կը գտնուէր, բոլորովին հակառակ իւր ամենօրեայ լուստի հանդարտութեան։ Հարիւրաւոր բնդարձակ առաջնակարգ իջեւաններու՝ քանի մը հազարաւոր սենեակներն, և երկրորդակարգ պանդոկներու նոյնքան և աւելի բնակարաններն չէին բաւեր չեանդելու բազմաթիւն եկաւորները, որք ամէնքն ալ հետաքրքրաբար կը սպասէին Յուցահանդիսի բացման հանդիսաւոր ժամուն, որոյ պիտի յաջորդէր նոյն գիշերուան Վենետիկոյ զինթիչ հրապառութեան տեսարանն, և երկրորդ օրն ալ Սեն-Քոն նորաշէն հոկայ զրահաւոր նաւուն առաջին անգամ ծովը ձգելու արարողութիւնն։ — Այս երեք հանդէսներն ևս կատարուեցան, հասարակաց ակնարկութիւնը լիւրջ կերպով յաջեցնելու շքեղութեամբ և յաջողութեամբ։

Արդէն (Ապրիլ 28ին) առաւօտեան ժամը 9էն սկսեալ՝ թագաւորական պարտիզին պատշգամբէն մինչև վէնետիկեան—Եւալարանի դուռը, երկայնաձիգ ծովափին վրայ՝ բխրաւոր հովանոցներու ներքև կը պատսպարուէին արեւուն ճառագայթներէն անհամար բազմութեան մը գլուխներն. և Դանիէլի արքունական իջեւանէն սկսած՝ մինչև Գարի-բալդի փողոցին ծայրը՝ Հասարակաց Պար-

տիզին ցամաքային մուտքը՝ կէս ժամու չափ ճանապարհի երկայնութեան վրայ՝ տուները զարդարուած էին դրօշակներով, և լուսամուտներէն դէպ ի ցած կախուած գորգերով և աղնիւ ու անկուածոյ զիպակներով։ Փողոցիկ շոգեհաւներն խիտ առ խիտ ճամբորդներով բեռնաւորուած՝ Ս. Մարկոսի ծովածոցին երկայնութիւնը երթուղարձով կը կրարէին, հազարաւոր գոնդոլներու և ուրիշ նաւակներու հետ։ Զրահաւորներ, տորպեդիներ, եակտեր և ուրիշ շոգեհաւներ զարդարուած էին հանդիսապէս սօսական աւուր զրօշակներով, իսկ Միկենէապոլիս հակայաձև գեղեցիկ ամերիկական նաւուն վրայ՝ խուռն բազմութիւն մի կը սպասէր ողջունելով իտալիոյ թագաւորական իշխանաց անցքը իրենց աղջիկէն՝ արքունական պալատէն դէպ ի ցուցահանդէս զնալու պահուն։

Յուցահանդիսի շինուածքն կառուցուած է քաղաքիս Հասարակաց Պարտիզին մի կողմը, գեղամաշակ ճարտարութեամբ և փառաւոր ճակատով, 25 սրահներ, որոց իւրաքանչիւրին զարդարուն պատերը՝ միջին հաշուով՝ կը կրեն ի տես դրուած 40—45 հրաշալի հսկայաձև կամ միջակ կամ փոքր նկարներ՝ համաշխարհի պատմական հռչակունեցող պատկերահաններու, և մէջերէն ալ զարդարուած են ոչ սակաւթիւ տրձաններով (նշուածոյ կամ մարմարեայ կամ յախճապակեայ, և այլն), որք ներկայացուցիչ են նկարչութեան և անդրիսագործութեան արուեստից Յայտնի, Ամերիկայի զանազան գաւառներու, Աւստրիա—Հունգարիոյ, Բելգիոյ, Դանիմարկայի, Գալլիոյ, Գերմանիոյ, Անգլիոյ, Նորուեգիոյ և Շուեդի, Հոլանդիոյ, Ռուսաստանի, Սլովակիոյ, Սլոանիոյ, Զուիցերեայ և իտալիոյ։ — Ընդհանուր պատկերաց թիւն 1000էն աւելի կը հաշուէ, և դեռ կը շարունակուին ճորանոր պատկերներ ալ հասնելու զանազան կողմերէ. իսկ արձաններն մեծաւորապէս 80—90 կրնան համրուիլ, և անոնքն Յայտնիոյ կայսերական պալատին տարեկանաւորաց գործերուն յարգի հաւաքածոյի։

Օրական արաքին հանդիսի նկարագրութեան յօդուածէս զուրս կ'իյնայ՝ այդ ամէն

առարկայից այցելութեան ժամանակ վրտաթողած աւելի կամ պակաս յափշտակիչ ազդեցութիւնն յայտնել, և զէժ քանի մ'ամենանշանաւոր պատկերաց վրայ խորհրդածել և վճիռ տալ. ուստի այս մասին կը կնքեմ ըսելիքս՝ գուցէ յարմար պատեհի թողլով կնիքը բանալու և գրելու։ Իսկ այժմ կը ծանուցանեմ միայն որ հանդիսաւայցը հասարակաց այցելութեան համար բաց պիտի մնայ՝ մինչև տարւոյն հոկտեմբերի վերջը, ճիշդ կէս տարւոյ ժամանակամիջոց. որով հանդիսիս ընթերցողաց հետ ուրիշ անգամ ալ խօսելու առիթ և ժամանակ ունիմ։ — Մինչև ցարդ այցելուաց խումն և քրահաղող բազմութիւնն (օրական 2000—2500 անձինք) հանդիսիս ելքին յաջողութիւն գուշակող նշան է։

Հանդիսաւայցիին բացման առաւօտը՝ թափամառնիդին և իւր ամուսնոյն Հեղինայ այցելութեան եկած առեւն, Հասարակաց Պարտիզին ժովափանց աստիճաններէն սկսեալ մինչև հանդիսատեղին ճամբան զորով ծածկուած էր, և այդ շաղկին բովանգակ երկայնութեան լրայ՝ երկու կողմէն շքեղ հագնուած դիւնաւարական զիծեր պատուոյ պատուար մ'էին ձևացուցեր, ազատ պահելու համար արբուռի շաղկը անթիւ հանդիսատեսից խումնուէն։ Գուցահանդիսի զրան հանդէպ՝ երկնագոյն թաղանթով քողարդիկա՛ն ձոփոցել կը փայլիլէր զուարթատես, ուր իշխանազանց ներկայութեամբ՝ պիտի կատարուէր բացման պաշտօնական արարողութիւնն։ Հովոցին ստորոտը՝ չորս կողմէն՝ ամենագեղեցիկ վարդենիներ կը զարգարէին, սփռելով քաղցր բուրումն և շնորհագեղ վայելչութիւն. իսկ մէջը պատարաստուած էին ոսկեզօծ դասեր՝ ընդունելու ընտրուած հիւրերը։ — Հրաւիրեցոց մէջ կային՝ բաց ի իտալիոյ պետական պաշտօնեայններէն և նախարարներէն՝ նաև ոչ սակաւ օտար ազգաց զեպպանք և հիւպատոսք, և բազմաթիւ ընկերութեանց և կաճառներու ներկայացուցիչներ։

Ժամը 10 1/4 ին թընդաց հրանօթոց ձայնն օդոյ մէջ՝ իմաց տալով ժողովրդեան որ թագաւորական իշխանագունք կը մեկնէին արքունիքէն դէպ ի Գուցահանդէս գալու։ Դժուար խորշին լուսածածան փայլին վրայ՝ զմայելի

տեսարան կը ներկայացորնէր արքունի թագաւորսն՝ գեղաճաշակ գոյներով զարդարուած նաւկներով։ Բաց ի քաղաքապետին յատուկ՝ վենետիկեան պատմական համրաւար և գեղով կախարդիչ քիտոններէն, նաև բազմաթիւ ազնուականաց տարազաւոր զարդարուն նաւկներ, իրենց գոյեղոյն հագնուած համազգեստիւք թխալտներով։ արքունական ոսկեզօծ շքեղ գոնդոլին չորս կողմէն կը ստարկէին թիթեակի զուարթածիծաղ ժպիւններու կամ՝ լաւ և ո՛ւ ժովածմիտներու վրայէն։ Ուրիշ անթիւ գոնդոլներ, բարկաներ, սանգաչներ ալ արբուռական կնդրախմբին առջևէն և ետևէն խիտ առ խիտ կ'ուղեկցէին, ձայնակցելով կեցցներու ողջունի՝ պետական մեծ նաւերէն բարձրագոյ հնչուած ուսահներուն, և ամերիկեան զբահաւորէն արձակուած ողջունատու հրետներու զուարթ կրկնիչներուն։ Մինչդեռ արքայազունք՝ Հասարակաց Պարտիզին աստիճանաց վրայ կը դնեն ոտքերնին, երաժշտախմբէ՛ք՝ արքունի չուին զուարթ ձայնով կը հնչեցընեն իրենց զործինները։ Քաղաքապետն, Գուցահանդիսի մասնախմբին անդամք, քանի մի նախարարք, ծերակուռի անդամք և երեսփոխանք կ'ընդունին վենետիկները նաւակէն, և ծանրաքայլ ընթանալով ծառերու հովանեաց ներքև տարաբնուած զորգայատակ սեղիէն կը յառաջեն դէպ ի պատրաստուած հովոցը, յարգանաց շարունակեալ ողջոյններու և կեցցներու մաղթանքներ լսելով՝ ուղւոյն երկու կողմը շարուած զօրախմբէն, մեքենական—լարժարանի աշակերտներէն և նոցա ետևը դիպած ժողովրդեան բազմութենէն։ Գեղաճաշակ վարդերով զարդարուած հովոցը հասած վայրկենին՝ ընդ առաջ եկաւ քաղաքական ներքին վարիչն (Մնիկիսան), և ընծայեց Հեղինէ իշխանուհոյն ամենաշքեղ փունջ մի ծաղկանց. յետ որոյ վեհափառ արքայազունք բարձրացան հովոցին մէջ, և նոցա հետ նաև պաշտական տիկնայք և բարձրաստիճան պաշտօնեայք։ Հոն քաղաքական վարիչն ներկայացոյց արքունական իշխանագանց Գուցահանդիսի յարգարիչ մասնախմբին անդամները և նոցա նախագահը։

Հաղի երաժշտութեան լուսն՝ քաղաքային վարիչն արտասանեց իշխանազանց առև իւր ողջունն և բարեմաղթութեան համառօտ շինորհարան ճառը. որուն պատասխանեց Հասարակաց-կրթութեան նախարարն Ճիան, ատրիոյ, ի վերջ ճառին յայտնելով յանուն թաղապետին՝ Յուցահանդիսին բացուած լինելը. Բազմախուռն և երկար ծափահարութիւնք յաւելուած եղան ճառին. ուսկից վերջը քաղաքային երաժշտութեան հնչեցուց Մանտեռնեզոյի ազգային երգը, և իշխանազունք՝ բազմութեան ողջոյններուն և զինուորական երաժշտութեան հնչուած արքունի երգին ուրախ արձագանգներու մէջէն անցնելով զընացին զէպ ի Յուցահանդիսին զօւրը. Գեանելու էր այս վայրկեանս բազմութեան ջանքը՝ արքունի իշխանազանց հետ Յուցահանդիսը մտնել կարենալու համար. այնպէս որ հարկաւորաւ առժամանակ մի փակել հանդիսավայրին զոները, որոց քիչ մ'ատենէն բացուած ատեն՝ խառն ի խառն ներս դնեցին հրաւիրեալք, լրագրատուաց խումբն, տոմսակաւորք, և այլն, և ակնթարթի մէջ Յուցահանդիսին սրահները մեծ ամբօխի մը երթեկեկի ենթարկուեցան :

Իշխանազունք նախ ինչորոնական ընդարձակ սրահին շրջանը կատարեցին, յետոյ առաջնորդուեցան ամենանշանաւոր սրահները, և մանաւանդ իտալական սրահը, ուր կրկին և կրկին անգամ իրենց գոհութիւնը յայտնեցին Հանդիսալարդար ժողովոյն գեղեցիկ կարգադրութեան վրայ, և. քանի մը պատկերաց մտալի բացատրութիւններ հարցուցին, ետեանը ուզելով նաև նոցա հեղինակներն և ուրախակցիլ իրենց հանձնարոյն յաջողակ արդիւնաւորութեանց համար :

Ժամը 11 1/2 ին վերափառ իշխանազունք ժողովրդական համակրանաց բուռն ցոյցերու միջէն՝ վերադարձան հանդիսալէս արքունի պալատը, որոյ պարտիզին առջև քաղաքին ճէզուատի Որբանոցին աշակերտք՝ զորոյակ ի ձեռքին՝ իրենց երաժշտական ողջոյնք հնչեցուցին. իսկ ժողովուրդն ուրախաւայն աղաղակներով զիմեց Ս. Մարկոսի հրապարակը՝ երկար ատեն իւր գոհութեան ցոյցը գեռ շաւուռակելու :

Գիշեր ժամանակ զարձալ անթուելի բողմութիւն մը հրալուռութեան տեսարանին ներկայ կը, գտնուէր Ս. Մարկոսի մեծ և փոքր հրապարակներուն, Սոյօ և Սկիափոնի ծովափանց վրայ ու Սալուտե և Ս. Գեորգ (San Giorgio) եկեղեցեաց առջև. իսկ ծովուն երեսը հաղարաւոր գանդոյներ և նաւակներ կը լիսային : — Վենետիկան համարաւոր հրալուռութիւն այս անգամ ալ նուազ սիրայի չեղաւ իւր սեփական և օտարական ազգած զարմանքէն :

Երկրորդ օրը 40—42,000 հանդիսատեսից և արքունի իշխանազանց աչքին առջև, յաղթական երաժշտութեան ձայներով ծով իջաւ նոր շինուած հրամանատարական զրահանաւ Սեբե, այն պատուանդանին վրայէն՝ ուսկից ժամանակաւ սահեր էին նոյն ջրերուն մէջ նաև Մորդոքիէն և Սիկիլիա և Քրիստափոր Կոլոմբոս զրահաւորք : — Ճիշդ կէսօրին կատարուեցաւ նաև այն վեմական արարողութիւն, որ ոչ վենետիկաց առանձինն՝ այլ բոլանդակ խաչիոյ ուրախութեան պատճառ էր, և որ Յուցահանդիսին բացման առթիւ լինելուն համար՝ աւելի ևս հանդիսաւոր եղաւ : — Երբ ինչեւէն առաջ՝ քաղաքին ծիրանաւոր Պարիսարքն վեմամաս Սարաոյ՝ օրհնեց նուր, որուն կրնալ մայր եղաւ իշխանուհին Հեղինէ՝ թագաւորուանդին լծակցին, որ խորհրդաւոր մատանին ծովը ձգեց :

Այս զրահաւորք՝ որուն երկայնութիւնն է 105 մետր և լայնութիւնն 21 մետր, լրաւ սոյգ մասն եօթն և կէս մետր բարձրութեամբ, և շոգեշարժ զօրութիւնն 15,500 ձիու ուժով, իսկ միջին երազութիւնն 18 հանգոյց ձևացնելով, ունի երկու պտուտակաւոր զօրծի, շորս հրետի 25 հարիւրորդամետր լայնութեամբ, ուրիշ ուժ ալ 12 հարիւրորդամետրի և վեց հատ ալ 57 հազարորդամետրի, և 20 հատ ալ սեփովի թնդանթներ : Երկուստեան ամբողջական ծախքն, հանդերձ շոգեշարժ զօրծիքով, եղած է 19,000,000 փրանկ :
